**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԳԵՎՈՐԳ ԳՐԻՇԱՅԻ ԱԹՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026-07-01 թիվ 2026UYQ25J տեղեկանքը, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի **Գևորգ Գրիշայի Աթոյանը,** իր 2026 թվականի ապրիլի 1-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **48.62** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակը, և **1.83** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով պատը և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-103-0018-0020 կադաստրային ծածկագրով **0.04012** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական N 21072026-08-0058, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Սարակապ, 1-ին փողոց 36/1 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **48.62** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակը, **1.83** քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պատը և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-103-0018-0020 կադաստրային ծածկագրով **0.04012** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական N 21072026-08-0058, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Սարակապ, 1-ին փողոց 36/1 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **111 052 (մեկ հարյուր տասնմեկ հազար հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Գևորգ Գրիշայի Աթոյանին /Անձնագիր՝ AV0200843, տրված՝ 29.04.2022, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գ. Սարակապ,1-ին փողոց, տուն 21/

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ՋԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ԵՆՈՔՅԱՆ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 98-Ա**

<<29>> հուլիսի 2026 թվական     քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎԱՀԱԳՆ ՎԱՀԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2026-02-20 թիվ 2026DGNJ7Y տեղեկանքը, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի **Վահագն Վահանի Խաչատրյանը,** իր 2026 թվականի մարտի 23-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **5.02** քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-072-0034-0107 կադաստրային ծածկագրով **0.09435** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական N 27072026-08-0001, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Ձիթհանքով, 5-րդ փողոց 3/1 հողամաս) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **5.02** քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը, նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-072-0034-0006 կադաստրային ծածկագրով **0,09435** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական N 27072026-08-0001, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Ձիթհանքով, 5-րդ փողոց 3/1 հողամաս) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **139 358 (մեկ հարյուր երեսունինը հազար երեք հարյուր հիսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Վահագն Վահանի Խաչատրյանի /Նույնականացման քարտ՝ 018726331, տրված՝ 27.06.2025, 054-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գ. Ձիթհանքով,5-րդ փողոց, տուն 3/

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ՁԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ԵՆՈՔՅԱՆ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ  N 99-Ա**

<<29>> հուլիսի 2026 թվականի　　　　քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 08-072-0008-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,12677 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ կադաստրային քարտեզագրման անճշտության հետևանով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-072-0008-0015-ից և 08-072-0008-0016-ից կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0,12677 հեկտար մակերեսով հողամասը, բնակավայրի էլեկտրոնային կադաստրային քարտեզում գրանցված է քաղաքացու անվամբ, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ծեռքբերումը հաստատող փաստաթղթեր, էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում  է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 08-072-0008-0015 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,12677 հեկտար մակերեսով հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Ձիթհանքով բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 1/ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**

**Հ. ՁԱՏԻԿՅԱՆ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆ**

**Ն. ՍԱՐՈՅԱՆ**

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ԵՆՈՔՅԱՆ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 100-Ա**

<<29>> հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 08-003-0004-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,04000 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ կադաստրային քարտեզագրման անճշտության հետևանով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0004-0003 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0,04000 հեկտար մակերեսով հողամասը, բնակավայրի էլեկտրոնային կադաստրային քարտեզում գրանցված է քաղաքացու անվամբ, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 08-003-0004-0003 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04000 հեկտար մակերեսով հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Մարակի քաղաք,Նոր թաղամաս 14-րդ փողոց, թիվ 2/ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**

**Հ. ՋԱՏԻԿՅԱՆ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆ**

**Ն. ՍԱՐՈՅԱՆ**

**Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ**

**Մ. ԵՆՈՔՅԱՆ**

**Ա.ՊՈՂՈՍՅԱՆ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 101-Ա**

<<29>> հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0034-0053 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00155 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԻԲԵԿ ՍՏՅՈՊԱՅԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և նկատի ունենալով, որ քաղաքացի Սարիբեկ Ստյոպայի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկու /ներկայումս Արկադի Տեր-Թադևոսյան/ փողոց 7/15 հողամաս հասցեում գտնվող առևտրի սրահի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0034-0030 կադաստրային ծածկագրով 0.0024 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին /վկայական՝ N 28072022-08-0026/ հարակից 08-003-0034-0053 կադաստրային ծածկագրով 0.00155 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայական N 15072026-08-0039, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 9/1 հողամաս / հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացի Սարիբեկ Ստյոպայի Կիրակոսյանի 2026 թվականի հուլիսի 27-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Քաղաքացի Սարիբեկ Սերյոժայի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկու /ներկայումս Արկադի Տեր-Թադևոսյան/ փողոց 7/15 հողամաս հասցեում գտնվող առևտրի սրահի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0034-0030 կադաստրային ծածկագրով 0.0024 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին վկայական՝ N 28072022-08-0026/ հարակից 08-003-0034-0053 կադաստրային ծածկագրով 0.00155 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայական N 15072026-08-0039, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Արկադի Տեր-Թադևոսյան փողոց 9/1 հողամաս/ որպես ընդլայնում, ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.00155 հեկտար հողամասի համար 12 276 /տասներկու հազար երկու հարյուր յոթանասունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Սարիբեկ Ստյոպայի Կիրակոսյանին (Անձնագիր AR0298794, տրված՝ 19.05.2017թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսկու փողոց, 12-րդ շենք, 8 բնակարան, հետագայում Քաղաքացի/՝ առևտրի սրահի պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի ընդլայնման համար:

2. Նշել, որ՝

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմաված կարգով Քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում Քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ**

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ՁԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ԵՆՈՔՅԱՆ

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ  N 102 -Ա**

<<29>> հուլիսի 2026 թվականի    քաղաք Մարալիկ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՎԱԶՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

ՀՀ ՇՄ Անի համայնքապետարանի և «Շին-Արման» ՍՊԸ -ի միջև 2025 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվել է աշխատանքների կատարման պայմանագիր՝ համաձայն որի կատարվելու էին ՀՀ ՇՄ Անի համայնքի տարբեր վարչական բնակավայրերի վարչական շենքերի և Լուսաղբյուր բնակավայրի հանդիսությունների սրահինորոգման աշխատանքներ, որոնք պետք է ավարտվեին մինչև 2026 թվականի փետրվար ամիսը: Սակայն, ելնելով եղանակային պայմաններից, վերոնշյալ աշխատանքներն իրականացվեցին մասամբ, իսկ ՀՀ ՇՄ Անի համայնքապետարանի կողմից վճարումներն իրականացվեցին փաստացի կատարված աշխատանքների դիմաց: Չկատարվեցին միայն ՀՀ ՇՄ Անի համայնքի Ձիթհանքով վարչական շրջանի վարչական շենքի և Լուսաղբյուր բնակավայրի հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները: Համաձայնագրով պայմանագրի կատարման ժամկետը երկարացնելը նպատակահարմար չէ, քանի որ նախատեսվում են իրականացնել ավելի մեծ ծավալով աշխատանքներ նշված տարածքներում: Բացի վերոնշյալ հանգամանքից ՀՀ ՇՄ Անի համայնքում այժմ իրականացվում են մեծ ծավալով սւբվենցիոն ծրագրեր, որի համար պահանջվում են ֆինանսական մեծ հատկացումներ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 9-րդ ենթակետի դրույթներով՝

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Թույլատրել Անի համայնքապետարանին իր կարիքների համար Շենք,շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների /ՀՀ ՇՄ Անի համայնքի վարչական շենքեր /Ձիթհանքով/, ՀՀ ՇՄ Լուսաղբյուր բնակավայրի հանդիսությունների սրահ/ իրականացման նպատակով 2025թ. հոկտեմբերի 25-ին ՇՄԱՆՀ-ԳՀԱՇՁԲ-25/2 ծածկագրով իր և «Շին-Արմա» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը լուծարել մասամբ,

մասնակի չկատարման հետևանքով՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման հիմքով /պայմանագրի 8.10 կետ/, և վերոնշյալ ֆինանսական միջոցները ուղղել դեպի սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար նախատեսված ՀՀ ՇՄ Անի համայնքի բյուջեի համապատասխան հոդվածներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | | |
|---|---|---|
| **կողմ՝ 13** | **դեմ՝ 0** | **ձեռնպահ՝ 0** |

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**

**Հ. ՋԱՏԻԿՅԱՆ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆ**

**Ն. ՍԱՐՈՅԱՆ**

**Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆ**

**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ N 103 -Ա**

<<29>> հուլիսի 2026 թվականի քաղաք Մարալիկ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՎԱԶՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ՇՄ Անի համայնքապետարանի և «Միկպրո» ՍՊԸ -ի միջև 2025 թվականի մայիսի 27-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ համաձայն որի մատուցվելու էր նախագծանախահաշվային փաստաթղթեր խաղահրապարակ կառուցելու նպատակով: Սակայն ՀՀ ՇՄ Անի համայնքում բարերարի միջոցներով, ամբողջությամբ /սկսած նախագիծ-նախահաշվային փաստաղթղթերից և մինչև ավարտական փուլ/ կառուցվեց նոր խաղահրապարակ, ինչի արդյունքում դադարեց գոյություն ունենալ գնման պահանջը: Բացի վերոնշյալ հանգամանքից ՀՀ ՇՄ Անի համայնքում այժմ իրականացվում են մեծ ծավալով սուբվենցիոն ծրագրեր, որի համար պահանջվում են ֆինանսական մեծ հատկացումներ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 9-րդ ենթակետի դրույթներով՝

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Թույլատրել Անի համայնքապետարանին իր կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 20 և Մաղաթյան փողոցի 15, 16 շենքերի բակային հատվածի բարեկարգման-կառուցապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման նպատակով 2025թ. մայիսի 27-ին ՇՄԱՆՀ-ԳՀԾՁԲ-25/1 ծածկագրով իր և «Միկպրո» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը լուծարել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման հիմքով /պայմանագրի 7.10 կետ/, և վերոնշյալ ֆինանսական մջոցները ուղղել դեպի սուբվենցիոն ծրագրերի իրականացան համար նախատեսված ՀՀ ՇՄ Անի հմայանքի բյուջեի համապատասխան հոդվածներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՍՅԱՆ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**

**Հ. ՋԱՏԻԿՅԱՆ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆ**

**Ն. ՍԱՐՈՅԱՆ**

**Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ**

**Մ. ԵՆՈՔՅԱՆ**

**Ա. ՊՈՂՈՍՅԱՆ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆ**

**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ν 104-Ա**

<<29>> հուլիսի 2026 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 151-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի N 1759-Ն որոշումը և 2026 թվականի հուլիսի 29-ի <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 151-Ա որոշման N 2 հավելվածը /հետագայում՝ Հավելված/ <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն / շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 29-ից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

**Կողմ՝ 13** **Դեմ՝ 0** **Ձեռնպահ՝ 0**

**Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

**Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ**

**Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ**

**Ա. ՇԱԲՈՅԱՆ**

**Հ. ՁԱՏԻԿՅԱՆ**

**Ժ. ԱԼԵՔՅԱՆ**

**Ն. ՍԱՐՈՅԱՆ**

**Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ**

**Մ. ԵՆՈՔՅԱՆ**

**Ա. ՊՈՂՈՍՅԱՆ**

**Գ. ՀԱԿՈԲՅԱՆ**

**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<29>> հուլիսի 2026 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԻՍԻ 29-Ի ԹԻՎ N 104-Ա
ՈՐՈՇՄԱՆ
<<ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ N 151-Ա
ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**1. Հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը՝**

**Աշխատողների քանակ՝ 26**

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 220000 | 1 | 220000 |
| 2 | Մեթոդիստ | 1 | 180000 | 1 | 180000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 168000 | 0,75 | 126000 |
| 4 | Դաստիարակ | 1 | 150000 | 1,17 | 175500 |
| 5 | Դաստիարակ | 1 | 150000 | 1,17 | 175500 |
| 6 | Դաստիարակ | 1 | 150000 | 1,17 | 175500 |
| 7 | Դաստիարակ | 1 | 150000 | 1,17 | 175500 |
| 8 | Դաստիարակ | 1 | 150000 | 1,17 | 175500 |
| 9 | Դաստիարակի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 10 | Դաստիարակի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 11 | Դաստիարակի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 12 | Դաստիարակի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 13 | Դաստիարակի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 14 | Երաժշտական ղեկավար | 1 | 116000 | 1,25 | 145000 |
| 15 | Ֆիզկուլտ-հրահանգիչ | 1 | 116000 | 0,75 | 87000 |
| 16 | Բուժքույր | 1 | 130000 | 1 | 130000 |
| 17 | Խոհարար | 1 | 124000 | 1 | 124000 |
| 18 | Խոհարարի օգնական | 1 | 124000 | 1 | 124000 |
| 19 | Տնտեսվար | 1 | 116000 | 0,75 | 87000 |
| 20 | Օժանդակ բանվոր | 1 | 116000 | 0,5 | 58000 |
| 21 | Հավաքարար | 1 | 116000 | 0,5 | 58000 |
| 22 | Լվացարար | 1 | 125000 | 0,5 | 62500 |
| 23 | Հոգեբան | 1 | 116000 | 0,5 | 58000 |
| 24 | Լոգոպեդ | 1 | 116000 | 0,5 | 58000 |
| 25 | Գործավար | 1 | 116000 | 0,75 | 87000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | Փականագործ | 1 | 116000 | 0,5 | 58000 |
| | **Ընդամենը** | **26** | **3485000** | **23,1** | **3160000** |

>>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**